

Ն. ՅԱ. ՄԱՌԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Հայկական ՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարանի Մկրտիչ Բարխուդարյանի ֆոնդում գտնվում են ակագեմիկոս Ն. Յա. Մառի 37 հայերեն նամակները՝ գրված 1890—1895 թթ.։ Այդ տարիներին աշխատելով Պետերբուրգի գրաքննչական կոմիտեի Արևելյան բաժանմունքում որպես գրաքննիչ, Մառը ուշադիր կերպով հետևում էր հայ գրականության ընթացքին։ Ձեռք գրաքննությունը չեմ թողնում,—գրում է նա Բարխուդարյանին,—քանի որ այս պաշտոնով կարող եմ հետևել (գոնյա մասամբ) հայ գրականության նոր հարուցած խնդիրներին»¹։

Ն. Յա. Մառը 1890—1895 թթ. ընթացքում գրաքննել է հ. Արուվյանի «Վերք Հայաստանի»-ն, Ս. Շահադիգի, Հովհ. Թումանյանի բանաստեղծությունները, Վ. Փափաղյանի, Ատրպետի վեպերն ու վեպիկները, ինչպես նաև այլ հեղինակների բազմաթիվ գործեր ու թարգմանություններ։ հ. Արուվյանի «Վերք Հայաստանի»-ի երկրորդ հրատարակության առթիվ նա իր հիացմունքն է հայտնում Բարխուդարյանին՝ վեպի մեջ տեսնելով հեղինակի լայն դեմոկրատիզմը։ Մառն ամեն կերպ աշխատում էր նպաստել հայերեն գրքերի հրատարակմանը։ Այսպես՝ տեսնելով, որ Վ. Փափաղյանի վեպիկների հրատարակման գործն անուշադրության է մատնված, նա կշտամբանքով գրում էր. «Ձեռք հասկանում ինչու հրաժարվում եք վեպերը տպելուց, կրկնում եմ, ես կարդացի և ոչինչ անթույլատրելի չգտա նրանց մեջ»²։

Նույնքան ուշադրությամբ Մառը հետևում էր թարգմանական գրականությանը, այն համարելով հասարակական մտքի զարգացման խթաններից մեկը։ Նա ձգտում էր նպաստել այնպիսի գործերի հրապարակմանը, որոնք կարող էին բարձրացնել ժողովրդի գեղարվեստական քաղաքական մակարդակը։ Այս մտահոգությունը երևում է Շչեգրինի երկու արգելված առակների հայերեն թարգմանության առնչությամբ։ «Շչեգրինի առակները,—գրում է նա Բարխուդարյանին,—որոնց առիթով, սակայն, ոչինչ որոշ չեմ կարող ասել, ես թույլ տվի սեպտեմբերին, թե հոկտեմբերին, բայց դուրս եկավ, որ նրանց առանձին հրատարակությունը հիմա արգելված է ուսերեն։ Հիմա նորից գեղուցում մը ներկայացրի, չգիտեմ ինչով կվերջանա՞՞՛ Մառն իր հետապնդումներով հասնում է նպատակին. «Շչեգրինի առակների վերաբերմամբ,—գրում է նա,—մասնաժողովը համաձայնեց ինձ հետ և թույլ տվեց»³։

Նամակներում Մառը խոսում է նաև լեզվին վերաբերող մի քանի հարցերի մասին. ալսպես՝ «ա» և «վ»-ի ուղղագրության, գոյականի և թվականի համաձայնության, ինչպես նաև լեզվի մեջ կատարած իր հայտնագործությունների մասին։

Ստորև հրապարակվող նամակները որոշ տեղեկություններ են տալիս Մառի այդ շրջանի աշխատանքների, հատկապես հաճախության բնագավառում կատարած ուսումնասիրությունների մասին, պարզում Մառին հետաքրքրող հարցերի շրջանակը, նրա կապերը հայկական կուլտուրայի գործիչների հետ, կարծիքները հայ գրողների և նրանց ստեղծագործությունների մասին և այլն։ Նամակները գրված են արևելահայ գրական լեզվով՝ խառն արևմտահայ և գրաբար հոլովական վերջավորություններով, ոճերով ու դարձվածքներով։ Նամակներից երեքը տպագրվում են ամբողջությամբ, երեքը՝ մասնակի կրճատումներով։ Պահպանված են հեղինակի լեզվական և ոճական բոլոր առանձնահատկությունները։

Պ. Ե. Սիմոնյան

¹ ԳԱՄ, Մ. Բարխուդարյանի ֆոնդ, № 281։

² Նույն տեղում, № 282։ Հավանաբար, խոսքը վերաբերում է Վ. Փափաղյանի «Պատկերներ Թուրքահայերի կյանքից», «Ճգնավոր Նղոս», «Թուրքահայերի կյանքից մի իրական պատմութուն» գրվածքներին, որոնք լույս են տեսել 1891—1892 թթ. Մոսկվայում, Մ. Բարխուդարյանի տպարանում։

³ ԳԱՄ, Մ. Բարխուդարյանի ֆոնդ, № 274։

⁴ Նույն տեղում, № 275։

Փ Ա Ս Տ Ա Ք Ղ Ք Ե Ր

Մկրտիչ Բարխուդարյանին՝

(1890)², հուլիս 15, էջմիածին.

Հարգո խմբագիր

Ստացա Ձեր սիրուն հրատարակությունը³, որուն մաղթում եմ ամսաթերթ դառնալ: Գրավիչ տառերը, մաքուր տիպը, փայլուն, շատ սիրուն թուղթը (ափսոս որ չափից դուրս բարակ, ավելի հարմար կլինի քիչ ավելի հաստ թուղթ, մանավանդ խոշոր տառերի համար) և գ խավորապես հրատարակչիդ լրջամտությունը տպարանին «օրինակալի» աստիճան են խոստանում:

Բովանդակության կողմից ոչինչ չունիմ ասելու: Ամենքը գոհ կը մնան՝ այսքան էժան, այդքան բաղմապատիկ, այդպես հետաքրքրական բաներ ստանալով:

Վերջապես շատ և շատ շնորհակալ եմ, որ նեղություն քաշեցիք և ինձ այսպես շուտ ուղարկեցիք մեկ օրինակ: Խնդրում եմ բաժանորդների թվում ինձ էլ դնել:

Հարգանք առ Ձեզ

Ն. Մառ.

Հ. Գ. Քննարանի գահակալը պաշտոնապես պահանջեց ինձնից ձեզ հետ ոչինչ ուղղակի հարաբերություն չունենալ, իհարկե, քննելու ձեռագիրներիդ վերաբերմամբ. ուրեմն ես հարկադրված էի «Մաղկ» հնարողի կենսագրությունը⁴ արդեն թույլ տված ուղարկել Պետերբուրգ — վասն որո (ինչպես ողեսերեն ասում են պաշտոնական ոճով) «պծեմ առ ի տեղեկություն ձեր», իսկ «Լուսադեմ»⁵ սպասում է յուր առաջին կեսը. որ նրա հետ միասին կատարե նույն ճանապարհորդությունը դեպի Պետերբուրգ, բայց որովհետև ձեզ չի հաջողվի ի դեպ ժամուր ինձ հանձնել առաջին մասը (ես այստեղից հեռանում եմ ցավոք սրտի հուլիսի սկզբից — 9), ուրիշ հնար չկա, պետք է սպասել մինչև որ վերադառնամ մայրաքաղաքը և ապա կամ Մոսկվայում կհանձնեք ինձ, եթե ճանապարհով ձեր խմբագրությունը և տպարանը այցելելու ժամանակ կունենամ, կամ ինձ կուղարկեք. (չմոռանաք ուղղակի ինձ ուղարկել և ոչ քննարանը, հասցեովս, Պետերբուրգ, համալսարան, Ն. Մառ):

Պատահմամբ ես լսեցի մեկից, իբր թե դուք առաջ պարապում էիք հայոց աղգի առակներով, կարելի է որ Ձեզ մոտ ձեռագիր ինչ կա հարցին վերաբերող կամ առանձին տեղեկություններ ունիք՝ խնդրեմ հիշել զնվաստությունս, որ այժմս զհայոց առակս ժողովեմ:

Ն. Մառ.

ԳԱԹ, Մ. Բարխուդարյանի ֆոնդ, № 259.

Մեծարգո պ. ՄԿՐՏԻՉ ԲԱՐՆՈՒԴԱՐՅԱՆ

(1891)⁶, հուլիս 31

Երկար եք լռում, ձեզանից ոչինչ տեղեկություն չունիմ. կարծեմ բարկացած եք, որ այսքան պահում եմ ձեռագիրներդ, բայց... կասե՛ք մի՞թե բայց. ավատացնում եմ ձեզ, որ գրաքննարանից հիմա ուղարկած ինձ արտասահմանից հասած լրագիրներ և թերթեր հետաքրքրությամբ եմ կարդում (անշուշտ և իհարկե՝ ոչ գրաքննության, այլ ուրիշ տեսակետից), բայց շատ ժամանակ եմ խլում:

Ես դիմեցի ձեզ նամակովս՝ ուղղակի «Մշակի» № 79⁷ կարդալուց հետո. Գ. Ա.⁸, որ քննադատում է ձեր հարդելի թարգմանությունը մեծ դարձացում է ինձ պատճառում. դրա նկատողությունները թարգմանության լեզվի վերաբերմամբ և մանավանդ առաջ բերած օրինակները պիտի համարվին նոր հայտնություն: Մի՞թե գուցե համաձայն եք քննադատի հետ. խոսքս վերաբերում է գլխավորապես երկու կետին. ա) «անտանելի է նմանապես, գրում է պատվելին, երբ թվական ամոռնը հոգնակի է, իսկ գոյականը մնում է եզակի, օրինակ՝ քսան երիտասարդ, փոխանակ քսան երիտասարդներ և այլն. «քսան երիտասարդներ (^^^), վեց էջեր (^^^), հինգ ոչխարներ (^^^), այդ հո ոսկերեն կլինի, թե չէ՝ բ) նույն (դիցուք 553) երեսի վրա էական բայր բացասական մասնիկն ընդունելով՝ մեկ տեղ գործ է ածվում չէ ձևով, մյուս տեղ չի ձևով. օրինակ՝ «նա հիմար չէ», իսկ հետո՝ «նա չի կարող» և այլն. շնայելով այդ նկատողության, ես կարծեմ, պիտի գրեն միշտ «նա հիմար չէ» և երբեք «նա հիմար չի» և «նա չի կարող» և երբեք «նա չէ կարող». եթե ուզում են զուտ հայկական ոգին պահել լեզվի մեջ, որովհետև առաջին օրինակում չէ բաղկանում է բացասական մասնիկից (ո-չ) և էական բայից (է), իսկ երկրորդ օրինակում գործածված «չի» ստուգաբանությունը բոլորովին ուրիշ է. քննադատը վերցնում է նախադասության մասնը, մինչդեռ բնագրում կա (եր. 553) «զա չի կարող փոխել իմ վճիռը». այստեղ «չի» մասնիկը շատ հետաքրքրական է. հիմա ժամանակ չունիմ «երկարաբանելու» և մանրամասնությունները առաջ բերելու, միայն կասեմ, որ ինձ հաջողվեցավ դրա ծագումն որոշել, միջնադարյան (հայոց գրականության համար պիտի համարվի միջնադար՝ XIV—XVII) դրականությունից քաղված փաստերով կարող եմ ապացուցանել, որ այստեղ չի հավասար է ոչ չէ+է-ի, այլ չէ(է)+ի-ի և ի վերաբերում է անորոշ բայի «փոխել»-ին, դասավորությանս սկզբնական ձևը կամ նախատիպը կլինի. դա չ+է կարող փոխել իմ վճիռը. հավասար է դա չ(է)ի փոխել կարող—դա չի կարող փոխել. սրա մասին պատրաստում եմ արդեն մեկ փորձ:

Ձեր ն. Մառ

ԳԱԹ, Մ. Բարխուդարյանի ֆոնդ, N 287.

Մեծարգո բարեկամ

պ. Մ. ԲԱՐՆՈՒԴԱՐՅԱՆ

1891. օգոստ., 14.

Ձեր սիրալիր նամակիդ մի քանի կետերին պատասխան եմ տալիս:

Նախ և առաջ՝ շնորհակալ եմ, որ այդպիսի հյուրասեր եք հանդիսանում դեպի իմ աշխատասիրությանց. իհարկե, ես և հառաջ համոզված էի, որ ձեզանից մարդ՝ լոկ մխիթարումն է կարող սպասել և երբեք վնաս, բայց ես ու-

գում էի հաստատ իմանալ, քանի կարժե ամեն մեկ երկսյուն տպված թերթ-
որ ճայելով այն արժեքին Արևելյան բաժանմունքին խնդիրքս մատուցանեմ:
Ձեր նախնի պահանջը շատ համեստ է ինձ երևում, մանավանդ ի նկատի ու-
նենալով, որ թերթը երկսյուն պիտի լինի:

Թոմսոնի⁹ և ընկ.(երեւերի) մասին միայն այսքան կասեմ, որ այն լեզվա-
գիտության դյուցազնին պատասխան, երկու անձանց (մեկ գիտությանց ճե-
մարանի անդամ՝ Կ. Զալեման է¹⁰, մյուս երիտասարդ սանսկրիտագետ և լեզ-
վագետ Ս. Օլդենբուրգ)¹¹ ստորագրությամբ լույս կտեսնե սեպտեմբեր Է. Ն.
ամսաթերթում¹²:

Ձեր ասած «Ա» և «Վ»-ի հարցն ինձ էլ է հետաքրքրում: Եվ ես հույս ունիմ
մի օր սրա վերաբերմամբ մի քանի նկատողություններ հրատարակել. իսկ հիմա
կնկատեմ միայն, որ այս երկու տառի վերաբերմամբ ուղղագրության երկու
կուսակցությունը կամ միտումն նոր երևույթ՝ նոր գրականությունն առաջա-
ցած երևույթ չէ. նա ծագած է հին ավուրց. գոնյա ես տեսած եմ և ուսումնա-
սիրած XVI—XVII-ի ձեռագիրները, որոնց մեջ «Վ» տառը ծայրից ծայր կամ
զրեթե ծայրից ծայր «Ա» տառի տեղին է բռնել:

«Վերք Հայաստանի»-ի¹³ տպագրությունը թույլ կտամ, հիմնվելով այն
փաստի վրա, որ նա բավականին հարուստ պաշար է պարունակում՝ մեկ ա-
մենակարևոր բարբառի. խոստովանում եմ, ես զեռ չեմ կարդացել ամբողջո-
վին, բայց կարծեմ կարող եք գործին ձեռնամուխ լինել. կաշխատեմ գրաբն-
նարանից ստացած ձեռագրերը քննելուց հետո անմիջապես կարդալ. ասում
են կա ավելի ընդարձակ ձեռագիր այն վեպին, քան տպված բնագիրը, պետք
է աշխատել նրան ձեռք բերել¹⁴:

Շնորհավորում եմ Ձեզ, որ Ձեռ տպարարանական գործերը լավ է ընթա-
նում և մաղթում եմ ապագայում հաջողություն:

Ձեր միշտ

Ն. Մառ

ԳԱԹ, Մ. Բարխուդարյանի ֆոնդ. № 270.

Մեծարգո բարեկամ պ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ.

(1892)¹⁵

Նախ և առաջ խնդրում եմ այս փորձի¹⁶ մեջ (25—32) սյունների կարգը
վերականգնելով և նկատված տառասխալները ուղղագրելով, իսկույն ուղար-
կել, հետը կցելով չորս ձեռագիր թերթիկ, որ պետք կզան խանդաված կարգը
ուղղելիս 31ր.—32 երես:

Նամակ ստանա ու պես խնդրում եմ թղթատարին հանձնել սրբագիր թեր-
թը 9—16 երեսներով. որի մասին առաջ էլ գրել եմ՝ օր առաջ Ցուցակ անվանց
կազմելու համար: Ձեզանից ստացա սրբագիր թերթերը 1—8 երես և 17—24.
Իսկ 9—16 էր. երեւի մոռացել եք:

Ուղարկում եմ ինձ մոտ վաղուց մնացած ձեր ձեռագրերը: Համառոտ ցու-
ցակ ձեռագրաց Վանուց Սեանա¹⁷ առանձին գրքույկով լույս կտեսնե հավել-
վածով «Հովհ. ավետարանի առաջին երեսի պատկերը X դարու ձեռագրից»,
որի 200 օրինակ այս օրերս կուղարկեմ ձեզ գրքույկի մեջ պատշաճ տեղ գնելու
չորս, թե ավելի ծայ:

Իմ մագիստրոսական Շարադրություն¹⁸ երևի տարիներ կմնա ինձ մոտ, եթե այդպես մեծաքայլ առաջ ընթանա տպումն: Իսկ տեսնում եմ, որ իմ պայմաններ ձեռնտու չեն ավելի արագ գրաշարելու իմ գրություններս, ուրեմն խոնարհարար խնդրում եմ, ուղղակի բարձրացնել ձեր վարձքը և արագացնել գրաշարումն: Հիմա արդեն ուշ է: ապրիլի վերջը մեկնում եմ Հայաստանում պտտելու և պեղումներ անելու¹⁹ երեք ամսվա միջոցում, բայց վերադարձած ես հուլիսունիմ, որ կնպաստեք ինձ իմ շարադրության ամբողջ բնագիրը (զուտ հայերեն տարբերությամբ հանդերձ), որ 5—7 թերթ կկազմվի, երեք ամսվա տպել, վարձք կարող եք նշանակել առանց որևիցե զիջումների: Պատահաբար թույլ գրեցեք դորա մասին ձեր կարծիքը, այսինքն կարող է ձեր տպարան ինձ համար երեք ամսվա միջոցում 5—7 թերթ (այն մեծության, որ սահմանված է ցուցակին համար) գրաշարել, թե ոչ, սրա մասին ավելի մանրամասն կխոսենք Մոսկվայում, ուր հուլիսով եմ տեսնվել ձեզ հետ ապրիլի վերջը, թե մայիսի սկիզբը, բայց ցանկություն ունիմ առաջ ծանոթանալ ձեր «տրամադրության» հետ նույն հարցի վերաբերմամբ:

Հարգանք առ Ձեզ

Ն. Ման

ԳԱԹ, Մ. Բարխուդարյանի ֆոնդ, № 280.

Մեծարգո բարեկամ պ. Մ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

1893, ապրիլ 18, Ս. Պետերբուրգ.

Խնդրում եմ ներողամիտ լինել, եթե երբեմն ուշանում եմ պատասխան գրել. վաղուց էի մտադիր նամակ գրել, բայց ժամանակի սղությունն չներեց ինձ մտադրությունս գործադրել: Դուք, բարեկամ, գովասանություններ եք իմ հոգվածներին վրա թափում, իսկ ես շարձարվում եմ խղճմտանքով՝ տպվելուդ հետո տեսնելով հոգվածներիս թերությունները և առհասարակ իմ սեփական տգիտությունը. փառք աստծո գոհյա չեմ հուսահատվում բոլորովին և մխիթարություն եմ գտնում այն կարծիքին մեջ, որ դուցե մի որոշ ժամանակի ընթացքում կհաջողվի ինձ «հայարանության» մեջ մինչև մեր օրերս կատարված ամբողջովին յուրացնել, յուր ապագային վերաբերմամբ՝ ճիշտ գաղափար կազմել, ի մասնավորի յուր ամենակարևոր խնդիրների լուծման: Իսկ ուղած իրագործելու համար պետք է շատ և շատ աշխատանք: Մեր մասնագիտությունը նորարարյա է և անկարելի է սահմանափակվել որևիցե ճյուղի մեջ, լեզվաբանական, գրականական, պատմական և այլն կողմից, պետք է լավ ուսումնասիրենք հայոց ազգը և միայն սրանից հետո հետազոտել որևիցե մասնավոր խնդիր: Մյուս կողմից, անկախ գաղափար կազմելու համար և մասնագետի աշակախ դիրքը բռնելու համար կարևոր է դրացի ազգերի գրականության և լեզվի հմուտ լինել, մասնավորապես պահլևի, ասորական, հունական և արաբական լեզուներին:

Այս հանգամանքները ստիպում են ինձ մեկ առարկայից վազել առ մյուսն և չեն ինձ տալիս հանգստություն. մինչև ուժս կներև, կջանամ այս ճանապարհով աշխատել և դուցե փաստապես արժանի դառնամ ձեր գովասանության. բայց խոստովանում եմ, շատ շեղահակալ եմ ձեր համակրություն հայտնուլ նամակից, նա ինձ ուժ է կրկնապատիկ անում, համբերություն է ներշնչում և հավատ է տալիս, որ եթե իրավ կատարեմ ուղածս, չեմ մնալ «անգնանա».

խակ եւս կրկնում եմ խնդիրքս՝ ներողամիտ լինել, երբ ես պատասխան եմ ունենում, քանի որ ուշանալս իրավ ժամանակի չունենալուց է պատահում:

Հիմա ձեր խնդիրներին պատասխաններս:

Ես զարմանում եմ ինչու՝ այդքան պակասաթիվ բաժանորդներ ունիք մինչդեռ և հառաջ կովկասում՝ եղած ժամանակս լսում էի և հիմա թերթերից կարդում եմ շատ համակրություն դնւպի ձեր «Հանդեսին»: Իմ կարծիքս այն է՝ անկասկած շարունակեք ձեր ձեռնարկությունը, բայց եթե միջոցների կարոտություն է զգալի, դիմեք, անշուշտ, այն հասարակության, որ չէ կարող շտեպել ձեր հրատարակության մեջ նույն հասարակության մեծ ծառայություն մատուցող մը: Ես գրաքննությունը չեմ թողնում, քանի որ այս պաշտոնով կարող եմ հետեւել (գոնյա մասամբ) հայ գրականությանն ու հարուցած խնդիրներին գուցե երբ կուղարկեն ինձ Վենետիկ և այլն, ստիպւած կլինեմ հրաժարվել, բայց տեսնենք, մինչև այն օր երկար ժամանակ է մնում: Հեղինակին իմ շնորհակալություն բանաստեղծություններն ինձ ուղարկելու համար և անկեղծ բարեմաղթությամբ:

Փափազյանի վեպերը կարծում եմ մեկ ամիս է, ինչ որ քննել եմ, ինչու չեք ուզում տպագրել, ի՞նչ եղավ վերջին ուղարկածդ, էլի թույլատրւած է մնում է ինձ մոտ միայն Սրինգ:

Ես քիչ հիվանդ եմ, զգուշանում եմ ներսից դուրս ելնել և այս երեք շաբաթ օր չեմ կարող Սրինգն էլ հասցնել գրաքննարանը:

Ձեր միշտ

Ն. Ման

ԳԱԹ, Մ. Բարխուդարյանի ֆոնդ, № 281.

(Մկրտիչ Բարխուդարյանին)

Մեծաբզո Բաբեկամ

1895, հունվար 30

Վաղը թե մյուս օրը կվերադարձնեմ ձեր «Հանդեսին» պաշարքը դրաքննարան: Ծնորհակալ եմ Ձեզնե հասցրած «Հանդեսին» վերջին №-ի համար, ներեցեք, որ ձեր նամակներն անպատասխան եմ թողնում. նկատած կլինիք, որ նրաձք անուշադիր չեն մնում և կարողացածիս չափ, այսինքն որքան ինձ ներում է ժամանակ, ձեր խնդիրքը, ուղիղ ասած, իմ պարտականությունը միշտ հոժար եմ ես անհապաղ կատարելու. մի բան եղավ, որ ստիպում է ինձ հրատարակիչների հետ թղթակցությունը կտրելու չափ ընդհատել, բայց գլխավոր արգելք, որ ինձ հարկադրում է վերին աստիճանի անքաղաքավարի թղթակից լինել ընդդիմ հետ մի ինչ որ գյուտ է հայոց լեզվի վերաբերյալ. եկող (ուսումնական) տարի կհրատարակեմ դորա մասին առաջին հոդվածը: Հիմա կասեմ միայն, որ այս երկու տարի դրանից մեկ ընդհատ հանգիստ չունիմ և ոչ միայն կտրել եմ ամենքի հետ հարաբերություն, այլև իմ շարադրության (դիսերտացիային), որ կենսական խնդիր է ինձ համար, չեմ կարող նվիրել հարկավոր ժամանակ:

Սույն նամակ գրելու ցանկություն եմ հղացել նալբանդյանցի կենսադրությունը²⁰ կարդալիս ձեր «Հանդեսին» մեջ և առհասարակ հայոց պարբերական մամուլի մեջ կատարյալ գոհար է նա. գոնյա իմ համոզմունքս սա է. առիթ

պատահելիս, խնդրեմ, հեղինակին հայտնեցեք իմ սրտանց շնորհակալությունը մեծ բավարարություն և հրճվանք է ինձ սպասածունը հողվածքը:

Ձեզ բարի հաջողում ցանկացող

Ն. Ման

ԳԱԹ, Մ. Բարխուդարյանի ֆոնդ, N 279.

ԾԱՆՈԹԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բարխուդարյան Մկրտիչ (1862—1927)—խմբագիր, հրատարակիչ, գրականագետ, թարգմանիչ, ծնվել է Ագուլիսում, ավարտել է Հազարյան ճեմարանը, ապա 1889 թ.՝ Մոսկվայի համալսարանի պատմա-լեզվաբանական ֆակուլտետը: Կատարել է մի շարք թարգմանություններ: 1907 թ. Մոսկվայում լույս է տեսել նրա «Անգլիայի պետական կազմը» աշխատությունը:

1888—1896 թթ. հրատարակել է «Հանգես գրականական և պատմական» պարբերականը: Իր շուրջը համախմբելով ժամանակի առաջագետ հայ մտավորականությունը Մ. Բարխուդարյանը ծրագրել էր «Հանդեսը» լույս ընծայել վեց ամիսը մեկ անգամ, բայց նյութական սուղ միջոցների պատճառով յոթ տարվա ընթացքում լույս է տեսել ընդամենը յոթ գիրք:

«Հանգեսին» աշխատակցել են՝ Պ. Պոռչյանը, Ղ. Աղայանը, Բաֆֆին, Ալ. Մատուրյանը, Հ. Հովհաննիսյանը, Ե. Շահազիզը, Պ. Աղամյանը, Կ. Բարխուդարյանը և ուրիշներ: Այնտեղ տպագրվել են նաև՝ Միք. Նալբանդյանի, Ստ. Նազարյանի գործերը, ինչպես նաև թարգմանություններ Լեոնտովի, Տուրգենևի, Հայնեի և Մոպսսանի ստեղծագործություններից:

Մ. Բարխուդարյանը Մոսկվայում ունեցել է սեփական տպարան, որտեղ տպագրվել են հայ հեղինակների բազմաթիվ գործեր:

2. Նամակն անթվակիր է: Մառը էջմիածնում առաջին անգամ եղել է 1890 թ.: Այս նամակը ուղարկված է այնտեղից, ուստի պետք է ենթադրել, որ գրված է 1890 թ.:

3. Խոսքը վերաբերում է «Հանգես գրականական և պատմական» պարբերականի 1-րդ գրքին (1889), որը իբրև նվեր ուղարկել էր Բարխուդարյանը:

4. Մեզ անհայտ:

5. «Նուսադեմին» վեպի հեղինակը լեհ գրող տիկին էոթենն է, հայերեն թարգմանությունը կատարել է Մ. Բարխուդարյանը: Տպագրվել է 1891 թ., Մոսկվայում:

6. Նամակն անթվակիր է: Քանի որ այստեղ խոսվում է «Մշակ»-ի 1891 թ. N 79-ում տպագրված գրախոսականի մասին, ուրեմն գրված պետք է լինի նույն թվականին:

7. «Մշակ»-ի 1891 թ. N 79-ում տպագրված է գրախոսական տիկին էոթենի «Նուսադեմին» վեպի հայերեն թարգմանության առթիվ: Գրախոսն ընդհանուր առմամբ գրական է գնահատում թարգմանությունը, բայց և բերում է լեզվական մի շարք թերությունների օրինակներ: Մառը համամիտ չէ գրախոսին և այդ առթիվ գրում է թարգմանչին:

8. Գ. Ա. ստորագրությամբ գրախոսականի հեղինակը, հավանաբար, «Մշակ»-ի խմբագիր Գրիգոր Արծրունին է:

9. Թումսոն Ալեքսանդր Լվանովիչ (1860—1935)—ռուս լեզվաբան: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը: 1910 թ. Պետերբուրգի Ակադեմիայի անդամ է եղել: 1893—1931 թթ. աշխատել է Օդեսայի համալսարանում: Թումսոնը զբաղվել է հայոց լեզվի հետազոտությամբ: Գրել է «Историческая грамматика современного армянского языка города Тифлиса» (1890):

10. Ջալեման Կարլ Գերմանովիչ (1849—1916)—ակադեմիկոս, հայտնի իրանագետ, Պետերբուրգի Ասիական թանգարանի դիրեկտոր: Նրա գիտական գործունեությունը գերազանցապես նվիրված է եղել պարսկական հին և նոր բանասիրության ուսումնասիրությանը: Հրապարակել է նոր և միջին պարսկերենի բերականություն:

11. Օղենբուրգ Սերգեյ Ֆեոդորովիչ (1863—1934)—ակադեմիկոս, արևելագետ, սանսկրիտագետ: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետը: Ուսումնասիրել է շնչկական գրականությունը: Նրա ամենախոշոր գիտական ուսումնասիրություններից մեկը հին հնդկական ծածկագրերի վերծանումն է:

12. Լ. Ն. «Նուսավորության նախարարություն» ամսաթերթի («Министерство просвещения») սկզբնատառերն են:

13. Խոսքը վերաբերում է Խ. Աբովյանի՝ «Վերը Հայաստանի» վեպի երկրորդ հրատարակությանը, որ կատարվել է 1897 թ. Մոսկվայում. հրատարակիչ՝ Իսահակ Փամհարյան, խմբագիր՝ Ստեփանոս Տեր-Սարգսյան:

14. Խոսքը վերաբերում է «Վերը Հայաստանի»-ի ընագրին, որը լրիվ լույս է տեսել 1948 թ. Հայկական ՍՍՌ ԳԱ գրականության ինստիտուտի հոատարակությամբ (հատ. IV):

15. Նամակն անթվագիր է: Այստեղ խոսվում է «Ցուցակ համառոտ ձեռագրաց վանուց Սևանա» աշխատության հրատարակության մասին. այն լույս է տեսել 1892 թ., պետք է ենթադրել, որ նամակը գրված է նույն թվականին:

16. Մառն այստեղ «փորձ» գործածել է «մամուլ» հասկացողությամբ, մյուս նամակներում ևս միշտ խոսում է «փորձեր» ստանալու, սրբադրելու և ուղղագրելու մասին:

17. Մառի «Ցուցակ համառոտ ձեռագրաց վանուց Սևանա» աշխատությունը տպագրվել է 1892 թ., Մոսկվայում:

18. Մառի մադիսարոսական դիսերտացիայի թեման եղել է «Сборник притч Вардана» աշխատության առաջին մասը, որը լույս է տեսել 1899 թ.:

19. Մառը Հայաստանում հետազոտություններ սկսել է 1893 թ.:

20. Միքայել Նալբանդյանի կենսագրությունը լույս է տեսել «Հանդես գրականական և պատմական» պարբերականի 7-րդ գրքում, 1896 թ., մեկ տարի չետո՝ նաև առանձին գրքով: Հեղինակն է Սրվանդ Եահազիզը:

НЕОПУБЛИКОВАННЫЕ ПИСЬМА Н. Я. МАРРА

П. Е. СИМОНЯН

(Р е з ю м е)

В период работы в Петербургском цензурном комитете в качестве цензора его восточного отдела акад. Н. Я. Марр имел широкие связи с деятелями армянской культуры, в том числе с издателем и редактором публиковавшегося в Москве «Литературного и исторического журнала» Мкртичем Бархударяном.

Адресованные М. Бархударяну письма Н. Я. Марра, шесть из которых публикуются, написаны по-армянски и охватывают период 1890—1895 гг. Они хранятся в Музее литературы и искусства Академии наук Армянской ССР, в фонде М. Бархударяна. Публикуемые документы сообщают некоторые сведения о работах Марра в этот период, в особенности о его исследованиях в области арменистики, выявляют круг вопросов, интересовавших Марра, его связи с деятелями армянской культуры, мнение о ряде армянских писателей и их произведениях и т. д.